ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄԹԻՎ 452

12ապրիլ2024թ.

«ԿԱՈՒՊԵՐՖՈՒԴ»ՍԱՀՄԱՆԱՓԱԿՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸԳՆՈՒՄՆԵՐԻԳՈՐԾԸՆԹԱՑԻՆՄԱՍՆԱԿՑԵԼՈՒԻՐԱՎՈՒՆՔՉՈՒՆԵՑՈՂՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՑՈՒՑԱԿՈՒՄՆԵՐԱՌԵԼՈՒՄԱՍԻՆ

Ծաղկաձոր համայնքի «Ծաղկաձոր քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից 2023 թվականի նոյեմբերի 22- ին հայտարարված «ԾՆՈՒՀ- ԳՀԱՊՁԲ- 24/1» ծածկագրով ընթացակարգի 3, 10, 15, 16,17, 20, 23, 29, 34 և 46 չափաբաժինների արդյունքում Ծաղկաձոր համայնքի «Ծաղկաձոր քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Գնորդ) և «ԿԱՈՒՊԵՐՖՈՒԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023 թվականի դեկտեմբերի 21-ին կնքվել է թիվ «ԾՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-24/1-3» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝Պայմանագիր) : Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017թ. մայիսի 4- ի թիվ 526- Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33- րդ կետի 8- րդ ենթակետը և Պայմանագրի 8.3 կետը՝ իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել է,որ «ԿԱՈՒՊԵՐՖՈՒԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ01059264) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Մասնակցի իրական շահառու հանդիսացող անձը, հանդիսանում է մի շարք ընկերությունների իրական շահառու, որոնք ներառված են գնումների գործընթացներ ին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թվականի մայիսի 4- ի հ.526- Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 121- րդ կետի պահանջների՝ մասնակցի՝ օրենքի 6- րդ հոդվածի 1- ին մասի 6- րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:»:

Միաժամանակ,Վաճառողը 3- րդ չափաբաժնի մասով մատակարարման ենթակա տավարի փափուկ միսը մատակարարել է պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին անհամապատասխան, Գնորդի կողմիցայն չի ընդունվել և հետ է վերադարձվել: Վաճառողին բազմիցս զգուշացվել է մատակարարել տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանք, սակայն շարունակվել է մատակարարել անորակ միս: Գնորդի կողմից վերոգրյալի մասով կազմվել է համապատասխան արձանագրություն:

Պայմանագրի 2.1.7և2.1.7.1 կետերի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի՝ 2.1.7

Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որ չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

Քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի 3- րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ,պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»

Հաշվի առնելով վերընշված հանգամանքները և իրավական կարգավորումները, Գնորդը թիվ «ԾՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-24/1- 3» ծածկագրով պայմանագրի 3, 10, 15, 16, 17, 20, 23, 29, 34 և 46 չափաբաժինները համարում է միակողմանի մասնակի լուծված՝ 1274180 /մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունչորս հազար մեկ հարյուր ութսուն/ ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017թ. մայիսի 4- ի թիվ 526- Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33- րդ կետի 17- րդ ենթակետով սահմանված դրույթները, համաձայն որի՝ «պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողման իլուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակիմ իակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվումէ նաև պայմանագիրկնքած անձի էլեկտրոն այինփոստին»: 2024 թվականի ապրիլի 05- ին Գնորդը պայմանագիրը միակողմանի մաս նակի լուծելու մասին ծանուցումը հրապարակել է տեղեկագրում և ուղարկել Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումներիմասին»օրենքի 6-րդհոդվածի 1-ին մասի 6-րդկետի ա)պարբերությամբ և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ԿԱՈՒՊԵՐՖՈՒԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 01059264) երկու տարի ժամկետով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.Սույն որոշման օրինակը ուղարկել «ԿԱՈՒՊԵՐՖՈՒԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Ծաղկաձոր համայնքի ղեկավարՆարեկՀարությունյանը:

4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել՝ այն ստանալու պահից հաշված երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ